ԱՎԻԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՄԱԿԴԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Խոսքի պատկերավորման ոճական միջոցների շարքում կարևորագույն դեր ունեն մակդիրները: Դրանք առանձնանալ արտահայտիչ են դարձնում խոսքը՝ նրան հաղորդելով հուզականություն և գեղարվեստական լիցք:

Մակդիրի բնորոշմանն անդրադարձել են շատերը: Մերօրյա ուսումնասիրություններում նկատվել է, որ մակդիրը գեղարվեստորեն կարող է բնութագրել ոչ միայն առարկան կամ երևույթը /որը մակդիրի հիմնական գործառույթն է/, այլև գործողությունը /երկրորդ դեպքում մակդիրն ունենում է պարագայական կիրառություն/.

Արյունաքամ մայր էր մտնում հազարամյա արևը հին,

Արյունավառ ժպտում էր մեզ այս աշխարհը իրիկնային... /Ե.Չարենց/:

«Այն բառը կամ բառակապակցությունը, որ արտահայտչորեն ու պատկերավոր ձևով, հիմնականում փոխաբերական նշանակությամբ, բնորոշում, բնութագրում է առարկան, երևույթը հեղինակային վերաբերմունքով՝ արտահայտելով գրողի հուզական վերաբերմունքն ուգնահատականը, կոչվում է մակդիր»[1]:

Ա.Մարությանը առանձնացնում է առարկա և գործողություն բնութագրող մակդիրները և դրանք անվանում գեղարվեստական մակադրություններ[2]:

«ՄԱԿԴԻՐ-առարկան, երևույթը, գործողությունը արտահայտչորեն բնորոշող բառ կամ բառակապակցություն»[3] :

«Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը»[4]: Վերոբերյալ բնորոշումները վկայում են, որ մակդիրի, որպես խոսքի պատկերավորման միջոցի, առանձնացման և ընդհանուր բնութագրի հարցում տարակարծություններ գրեթե չկան: Քերականական որոշիչները բնութագրում են առարկան կամ երևույթը՝ հիմնականում որևէ հատկանիշի ընդգծումով դրանք տարբերակելով այլ առարկաներից ու երևույթներից /խոնավ հող, մտերիմ մարդ, երկարճանապարհ, խաղաղ գոյակցություն, կայուն խաղաղություն, անկախ պետություն, փայտե ձի/:

---

[1] Ա.Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե, 2000, էջ142:
[2] Նույն տեղում, էջ 139:
[3] Ֆ.Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Ե, 2000, էջ 115:
[4] Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե, 2003, էջ 334:

Սինչդեռ մակդիրները, որոնց գոյացության հիմնական նախապայմանը փոխաբերական իմաստն է, առարկան կամ երևույթը այլ առարկաներից կամ երևույթներից տարբերակելու նպատակ չունեն: Դրանք առավելապես իրականության գեղարվեստական ընկալման, հուզական գնահատողության արդյունք են, քանի որ բնույթով հիմնականում անհատական են, սուբյեկտիվ, և անհատի գեղագիտական մտածողության ուժով էլ պայմանավորվում է դրանց արտահայտչականության և ազդեցության չափը: Պատահական չէ, որ բազմաթիվ մակդիրներ ստեղծվում են որպես հեղինակային նորաբանություններ և հաճախ դիպվածային բնույթ ունեն: Բանաստեղծական երևակայությունը նորովի է դիտարկում աշխարհը, իրերի ու երևույթների մեջ տեսնում նոր հատկություններ և նորակերտ մակդիրներով ստեղծում թարմ և գունեղ պատկերներ:

Ճիշտ է նկատված, որ «մակդիրների առաջին և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ և առաջին հերթին մակդիրը հենց դրանով է տարբերվում քերականական որոշչից: Բառի փոխաբերական իմաստը մակդիրը կերտող միակ և հիմնական հատկանիշն է, ինչպես առարկաների, երևույթների, այնպես և գործողության հատկանիշները գեղագիտորեն բնութագրելիս»[5]:

Նկատենք, սակայն, որ երբեմն, մանավանդ որոշ բարդ ածականների որոշչային կիրառությունների դեպքում, դժվար է որոշել փոխաբերության սահմանը, հստակորեն ընկալել փոխաբերական իմաստը, քանի որ դրանք գրեթե ծույլ են ուղղակի իմաստներին կամ նույնն են, ինչպես՝ վեհանիստ,

սիգապանծ, վեհագագաթ լեռներ, վեհաշուք, վսեմաշուք կեցվածք, վսեմաթռիչ արծիվ, ևն, որոնց մակդրային կիրառության հիմքը բառիմաստից բխող՝ հեղինակի գնահատողական վերաբերմունքն է:

Իհարկե, նման կիրառությունները հաճախադեպ չեն և չեն կարող ազդել մակդիրների ընդհանուր բնութագրի վրա:

Այսպիսով, մակդիրի գոյացության, կիրառության հիմքը փոխաբերական իմաստն է, և դա տրամաբանական է. առարկայի, երևույթի, գործողության արտահայտչական, գեղարվեստական, հեղինակի գեղագիտական ընկալումով պայմանավորված բնութագիրը ինքնըստինքյան բխում է բառի հավելյալ իմաստներից, որոնց հիմքը երևույթների ու առարկաների անտեսանելի հատկությունների բացահայտումն է.

Դու՝ 20 -րդ և, անտարակույս, հոբելյանական,
Դու՝ հյուլեական,
Կարծես էական
Եվ ավելի քան կարծես բանական
Բայց նաև նույնքան խելագար դարի

---

[5] Լ. Եզեկյան, Նույն տեղում, էջ 335:

Ով քաղաքացիդ անզոր ու հզոր,
Անորոշության ցավով ես հիվանդ.../Պ. Սևակ/

Սիևնույն երևույթը բանաստեղծը բնութագրել է անսպասելի, սակայն դիպուկ ու խոսուն մակդիրներով՝ հոբելյանական, հյուլեական, էական, բանական, խելագար դար...

Կամ մի ուրիշ բանաստեղծության մեջ Պ. Սևակը ստեղծել է այսպիսի մակդիրներ.

Բառերն սկսում են անձն վիրավորել,
Որովհետև նրանք ինձ են արձագանքում
Անորսալիհեռվից,
Աննեղելի հեռվից:

Մակդիրների կիրառության հարցում խիստ կարևորվում են նաև խոսքային պայմանները, քանի որ քերականական որոշիչները խոսքային համապատասխան պայմաններում, մասնավորապես, բանաստեղծական խոսքում կարող են վերածվել մակդիրների: Օրինակ՝ գունատ աղջիկ և ճերմակ շոր կապակցություններում գունատ և ճերմակ բառերը ընդամենը քերականական որոշիչներ են՝ տարբերակիչ դերով, բայց Տերյանի հայտնի բանաստեղծության մեջ դրանք հուզական և բանաստեղծական ապրումի որոշակի լիցք ունեցող մակդիրներ են.

Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

Գրական ստեղծագործությունների վերլուծության ժամանակ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի նաև խոսքի պատկերավորման միջոցների վրա, քանի որ առանց դրանց հնարավոր չէ աշակերտներին ամբողջական պատկերացում տալ տվյալ ստեղծագործության գեղարվեստական արժանիքների մասին: Պատկերավորման միջոցների պարզաբանումն ու բացահայտումը նպաստում են ոչ միայն ստեղծագործության բովանդակությունը ճիշտ հասկանալուն, այլև զարգացնում սովորողների գեղարվեստական ճաշակը, օգնում նրանց՝ լավ հասկանալու գեղարվեստական խոսքի նրբությունները:

Մակդիրի ուսուցման դժվարություններն ունեն և՝ օբյեկտիվ, և՝ սուբյեկտիվ պատճառներ:

Աշակերտի համար հեշտ գործ չէ ընկալել մակդիրի հավելյալ իմաստն ու հուզական երանգը, այն տարբերել քերականական որոշչից /եթե որոշչային կապակցություն է/, մանավանդ որ երբեմն բնագրում իսկ դժվար է որոշել այդ տարբերությունները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ մակդիրների ուսուցման ժամանակ անտեսվում են մակդիրների և քերականական որոշիչների տարբերությունները /հաճախ մակդիրներ են համարվում բոլոր որոշիչները/, անտեսվում են մակդիրների և մակադրյալ բառերի միջև եղած պատճառական կապերը, բնագրային պայմաններն ու խոսքային միջավայրը: Լեզվի պատկերավորման մյուս միջոցների հետ ընդհանուր ձևով թվարկվում են

մակդիրները և աշակերտներին հանձնարարվում է տետրերում դուրս գրել դրանք՝ հաճախ նույնիսկ առանց մակադրյալ բառերի: Ուսուցման նման ձևը քիչ արդյունավետ կարող է լինել, քանի որ այդ դեպքում անտեսվում են մակդիրի ոճական-արտահայտչական հնարավորությունները: Վերցնենք Իսահակյանի հետևյալ քառատողը.

Դու, Արագած, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:

Մակդիրներն ընդգծելուց, առանձնացնելուց զատ առավել կարևոր է նրանց հավելյալ իմաստների ու ոճական-արտահայտչական հնարավորությունների բացահայտումը, առարկաներն ու երևույթները բնութագրելու հեղինակային դիտակետն ու վերաբերմունքը: Ինչու՞ է բանաստեղծն Արագածն անվանում ալմաստ վահան, ինչու՞ կայծակեղեն թրեր, բյուրեղ վրան, թափառական ամպեր, իր երևակայությամբ նա ի՞նչ նոր հատկանիշներ է հայտնաբերում բնութագրվող առարկաների մեջ: Ի դեպ, Գ. Զահուկյանի և Ֆ. Խլղաթյանի կազմած ոճաբանության ձեռնարկում, որը նախատեսված է բարձր դասարանների ուսուցիչների համար /Ե,1976/, համապատասխան վարժություններ կան: Մնում է ուսուցչի միջամտությունը, որպեսզի աշակերտները խորությամբ ընկալեն մակդիրների ոճական արժեքը, տեսնեն դրանց հավելյալ իմաստները: Նպատակահարմար է մակդիրների ուսուցումն սկսել բառի փոխաբերական իմաստի մասին աշակերտների գիտելիքները թարմացնելով, քանի որ այդպիսով նրանք հեշտությամբ կընկալեն այդ հավելյալ իմաստները: Ապա հարկ է աշակերտներին բացատրել քերականական որոշիչների և մակդիրների տարբերությունները՝ ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ մակդիրները, ի տարբերություն քերականական որոշիչների, առարկաներն ու երևույթները տարբերակելու նպատակ չունեն: Սա հատկապես տեսանելի կդառնա, երբ նույն գոյականի վրա մակդիրի փոխարեն դնենք քերականական որոշիչ, ինչպես՝ գագաթներդ բյուրեղ վրան և չորստեղանի վրան:

Նպատակահարմար է նաև այսպիսի առաջադրանք տալ աշակերտներին: Նրանք ինքնուրույն կարող են տրված գոյականների հետ գործածել և մակդիրներ, և քերականական որոշիչներ՝ զարգացնելով սեփական երևակայությունը: Աշակերտներին պետք է բացատրել նաև, որ որոշչային կապակցությունները բնագրից դուրս կարող են արտահայտել որոշակի հասկացություններ / խոր լիճ, երկաթե մահճակալ/, մինչդեռ մակդիրը հաճախ բնագրից չի կարելի առանձնացնել, քանի որ նրանով բնութագրվող հատկության իմաստային ամբողջականությունը դրսևորվում է բնագրային հատվածի կամ խոսքաշարի մեջ: